«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵ

ՈՐՈՇՈՒՄ N 01/12-1

Կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին

ք. Երևան, Խանջյան 27 **08.12.2022թ.**

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ ՀՖՖ) Կարգապահական և էթիկայի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) նիստին մասնակցում են Կոմիտեի անդամներից 4-ը, հետևաբար, համաձայն ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (այսուհետ՝ Կանոնակարգ) 7-րդ հոդվածի 7.01 կետի, Կոմիտեն իրավազոր է։

Կոմիտեն, ղեկավարվելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի Կանոնակարգի (այսուհետ՝ կանոնակարգ) 3-րդ հոդվածով, 4-րդ հոդվածով, 5-րդ հոդվածով, 20-րդ հոդվածով, 21-րդ հոդվածով, 28-րդ հոդվածով և Կանոնակարգի այլ վերաբերելի հոդվածներով,

Քննության առնելով Կոմիտեի կողմից 2022 թվականի դեկտեմբերի 2-ի հարուցված թիվ 01/12 կարգապահական վարույթի նյութերը,

Հաշվի առնելով՝ 28.11.2022թ-ի «Լեռնային Արցախ»-«Վան» (ՊԼ-091) խաղի ժամանակահատվածում «Լեռնային Արցախ» թիմի գլխավոր մարզիչ Արտաշես Ադամյանի կողմից գլխավոր մրցավարի հասցեին հայհոյանքներ թույլ տալը,

Որոշեց՝

Հաստատված համարել «Լեռնային Արցախ» թիմի գլխավոր մարզիչ Արտաշես Ադամյանի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 37-րդ կետը՝ վերջինիս որակազրկել մինչև 2023 թվականի մարտի 31-ը ներառյալ և «Լեռնային Արցախ ՖԱ» ՍՊԸ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի երկուհարյուրհիսունապատիկի՝ 250.000 ՀՀ դրամի չափով։